

**ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԿՐԿՆԱՍԵՌԻ ԲԱՅԵՐԸ**  
**(Կրկնասեռություն սեռի տեղաշարժի հետևանքով)**

*Բանասիր. գիտ. թեկնածու Հ. Ս. ԶԱՔՅԱՆ*

Տարածամանակյա կտրվածքում լեզուն ենթարկվում է տարբեր կարգի փոփոխությունների, որոնք ընդգրկում են համակարգի բոլոր մակարդակները:

Բառերի ձևի և իմաստի, խորքային և մակերեսային կառուցվածքների հարաբերության փոփոխությունները բայական համակարգում պայմանավորում են խնդրառական որոշակի տեղաշարժեր: Այդ փոփոխությունների հետ են կապվում մի խումբ բայերի կրկնասեռության չեզոքացման, միասեռ բայերի կրկնասեռ դառնալու գործընթացները, որոնք պայմանավորված են բառապաշարի կատարելագործմամբ և համապատասխանում են ներլեզվական օրինաչափություններին:

Ըստ ավանդական մոտեցման՝ կրկնասեռ է բառարանային միավոր հանդիսացող այն բայական բառույթը, որի հասկացության ծավալում համատեղվում է տարբեր սեռերի՝ ներգործական (*նք.*) և չեզոք (*չք.*), ներգործական և կրավորական, կրավորական և չեզոք և այլն գաղափար՝ առանց բառական-քերականական լրացուցիչ փոփոխությունների<sup>70</sup>: Ի տարբերություն կրկնասեռության մյուս տեսակների՝ *նք./չք.* կրկնասեռությունը հատուկ է հայերենի պատմական զարգացման բոլոր փուլերին՝ որպես սեռի քերականական կարգի առանձնահատկություններից մեկը:

Կրկնասեռությունը ձևավորվում է, երբ բայի իմաստային տարբերակումը բնիմաստի նկատմամբ առաջ է բերում իմաստային նրբերանգներ, որոնք կարող են արտահայտել անցման գաղափար կամ սահմանափակել այն, ինչի հետևանքով բայն ընդունում է քերականական լրացուցիչ հատկանիշ՝ ներգործական կամ չեզոք սեռի նշանակություն<sup>71</sup>:

Ժամանակակից հայերենի բայը, խնդրառական ընդհանրություններ ունենալով զարգացման նախորդ փուլերի հետ, ունի նաև որոշակի տարբերություններ, որոնք մասամբ բացատրվում են բայերի իմաստային կառուցվածքների փոփոխությամբ: Այդ փոփոխություններով հաճախ

<sup>70</sup> Տարբեր լեզուներում կամ նույն լեզվի զարգացման տարբեր փուլերում բայական նույն բառույթում կարող են համատեղվել տարբեր սեռերի նշանակություններ: Օրինակ՝ հնդեվրոպական նախալեզվում բայական նույն բունը միաժամանակ ներգործական, կրավորական, չեզոք սեռի էր, հին հայերենում հասարակ սեռի բայերը ունեին ինչպես ներգործական, այնպես էլ կրավորական սեռի նշանակություն: Որոշակի թվով սկզբնաձևային բառույթներ գրաբարում, միջին հայերենում և արդի հայերենում համատեղում են ներգործական և չեզոք սեռի նշանակություններ, կան նաև կրավորական և չեզոք սեռի նշանակություններ համատեղող կրկնասեռ բայեր և այլն:

<sup>71</sup> Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Ե., 1962, էջ 672:

պայմանավորվում են նաև սեռային տեղաշարժերը, որոնք կրկնասեռության ձևավորման հիմք են դառնում<sup>72</sup>:

Լեզվական փաստերի զուգադրական քննությունը վկայում է, որ գրաբարում և միջին հայերենում քերականական մեկ սեռ ունեցող մի խումբ բայեր արդի հայերենում դարձել են կրկնասեռ (իմաստային ծավալի ընդարձակման հետևանքով որևէ գործողության հասկացություն արտահայտող բայը ներառում է *նոր իմաստներ*: Իմաստային նորաբանություններից մեկը (կամ մի քանիսը) առաջ է բերում սեռային տարբերություններ և պայմանավորում է բայի կրկնասեռությունը)<sup>73</sup>:

Իմաստային նորաբանությունները կարող են լինել հետևյալ կարգի:

ա) *Բառի բնիմաստի զարգացման հետևանք. զանգակել* բայը գրաբարում ներգործական սեռի բայ է՝ «զանգակներով զարդարել» նշանակությամբ, իսկ արդի հայերենում ունի նաև «զանգակի նման հնչել» իմաստը, այսինքն՝ կրկնասեռ է<sup>74</sup>: *խոյրել* բայը գրաբարում ունի «արհամարհել, անարգել, մերժել», արդի հայերենում՝ նաև՝ չեզոք սեռի «խորշել, զգվանքով խուսափել» նշանակությունը<sup>75</sup>:

բ) *Նոր հասկացությունների չեզոք անվանումներ. զեկուցել* բայի կրկնասեռությունը արդի հայերենում պայմանավորված է «հրապարակով հաղորդել, զեկուցում տալ որևէ գիտական, քաղաքական և այլ

<sup>72</sup> Գրաբարի և միջին հայերենի կրկնասեռ բայերը ա) գերազանցապես պարզ սկզբնահիմքով և ծորողության բայեր են, բ) կրկնասեռությունը պայմանավորված է կա՛մ բայի բազմիմաստությամբ, կա՛մ խնդրառությամբ, գ) ներգործական և չեզոք սեռերի նշանակությունները կա՛մ միանգամայն տարբեր, կա՛մ գործողության հակադիր ուղղվածությունը ցույց տվող բառիմաստներ են: Տե՛ս Հ. Զաքյան, Հին հայերենի կրկնասեռ բայերը. տարածամանակյա քննություն, Գյումրի, 2015: Միջին հայերենի կրկնասեռ բայերը, Գյումրի, 2016:

<sup>73</sup> Բառապաշարը փակ և կայուն համակարգ չէ. այն անմիջապես արտացոլում է հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխություններն ու տեղաշարժերը: Յուրաքանչյուր նոր առարկա կամ երևույթ, հասկացություն, գաղափար կամ հարաբերություն, որ առաջ է գալիս մարդկային հասարակության որևէ բնագավառում, իր արտացոլումն է գտնում բառապաշարի մեջ՝ համապատասխան բառի ստեղծումով կամ լեզվում գոյություն ունեցող բառերի վերաիմաստավորումով:

<sup>74</sup> *Զանգակում են* շատրվանները ցնծության: Տե՛ս՝ «ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 2, Ե., 1972, էջ 6 (այսուհետև՝ ԺՀԼԲԲ): Հմմտ. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837 (այսուհետև՝ ՆՀԲ): Ռ. Ս. Ղազարյան, Գրաբարի բառարան, Ե., 2000 (այսուհետև՝ ԳԲ): Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976 (այսուհետև՝ ԷԱԲ): Վերլուծությունը հիմնականում կատարվում է ըստ այս բառարանների, և հարկ չկա էջերը ամեն անգամ նշելու:

<sup>75</sup> Ամեն մահմեդական խորշում և *խոյրում էր* նրանից (ԺՀԼԲԲ, 2, 563): Նկատենք, որ նոր նշանակությունները արդի հայերենում *խոյրել* բայի առաջնային իմաստներն են, այսինքն՝ բայի հասկացության ծավալում կատարվել է նաև իմաստային տեղաշարժ:

նյութի մասին» նշանակությամբ *առձայնել* բայի կրկնասեռությունը՝ «առձայնություն ստեղծել (գրկն.)» իմաստով և այլն<sup>76</sup>:

գ) *Փոխաբերական գործածություններ*. հին հայերենում *լրտեսել* բայն ունի (*նբ.*) «իբրև լրտես դիտել մի բան, հսկել մի բանի վրա տեղեկություններ հավաքելու համար», արդի հայերենում՝ (*նբ.*) «գաղտնաբար հետևել մեկի արարքներին, լսել խոսակցությունները», 2. (*չբ.*) *փխբ.* «դարան մտնել, դարանամուտ լինել» նշանակությունները, *լրարափել*-ը միջին հայերենում չեզոք սեռի բայ է՝ «տեղալ, անձրևել, ձյունել» նշանակություններով, իսկ արդի հայերենում կրկնասեռ է, քանի որ ունի նաև ներգործական սեռի *փխբ.* «թափել, տարափի, հեղեղի նման վրա տալ» նշանակությունները և այլն<sup>77</sup>:

Արդի հայերենում բառերի իմաստային ընդլայնումը բացատրվում է բառիմաստի զարգացման ընդհանուր օրինաչափություններով և գրական լեզվում ավելի մեծ չափերի է հասնում: *Խփել* բայը գրաբարում ունի ընդամենը երկու (*նբ-փակել, ծածկել*), իսկ արդի հայերենում՝ 20-ից ավելի (այդ թվում նաև չեզոք սեռի) նշանակություններ՝ (*նբ.*) 1. հարվածել, 2. գնդակահարել, 3. կրակել, 4. հարձակվել, 5. նվագել, 6. կացնել, փակցնել, 7. խոցել, ծակել, 8. դոփել, 9. դարիվ-դարիվ անել, կոծել, 10. ծեփել (խմորը), 11. թիրախին հարվածել, 12. հարել, 13. ցայտեցնել, 14. դարպասը գնդակ անցկացնել, 15. ուղղվել, 16. հնչեցնել, (*չբ.*) 17. փչելով գալ հարվածել, խփվել, 18. բաբախել, (*նբ. // չբ.*) 19. զանգ տալ, հնչեցնել, (*չբ.*) 20. ուժգնորեն ժայթքել (նավթը), 21. (*նբ.*) քննադատել, 22. (*փխբ.*) շահել, (*փխբ.*) 23. թղթախաղում հաղթել, (*փխբ.*) 24. անուղղակի կերպով վիրավորել, (*փխբ.*) 25. նկրտումները ընդլայնել, (*փխբ.*) 26. հարբեցնել, բռնել և այլն<sup>78</sup> :

*Բոլորել*-ը գրաբարում ներգործական սեռի բայ է՝ 1. փաթաթել, հյուսել, 2. շուրջը պատել, 3. հավաքել, խմբել, 4. շրջան կատարել, լրացնել իմաստներով, իսկ արդի հայերենում կրկնասեռ է. ունի (*նբ.*) 1. ոլորելով բոլորակ ձև տալ, 2. ոլորելով իրար փաթաթել, հյուսել, 3. շուրջը

<sup>76</sup> Մեր կոլխոգի գալիք աշխատանքների պլանն արդեն պատրաստել եմ և դրա մասին պիտի *զեկուցեմ* կոլխոգի ընդհանուր ժողովում (ԺՀԼԲԲ, 2, 28): Գրաբարում այս բայերը *նբ.* են՝ հետևյալ նշանակություններով՝ *զեկուց(ան)ել*-1. *իմաց տալ, տեղեկացնել, լուր տալ, հաղորդել, իրազեկել, հայտնել, 2. պատմել, 3. ծանուցել, 4. հասկացնել, առձայնել*-1. *ծայն տալ, բարձր ձայնով կոչել, կանչել, վերաձայնել, 2. անուն տալ, անվանել, հորջորջել*:

<sup>77</sup> Որչի բերանը *լրտեսող* գալի պես այդ սև հրամանը պողթկաց (ԺՀԼԲԲ, 2, 435): Եվ երկինքը իր աստղերեն վար իր արյունն է, որ մեր բոլորի վրա *կտարափե* (ԺՀԼԲԲ, 4, 462) և այլն:

<sup>78</sup> Անձրևախառն քամին հանկարծ *խփեց* պատուհանին (ԺՀԼԲԲ, 2, 603): Տեսեք, ինչպես է *խփում* (նավթը). ոսկի է (ԺՀԼԲԲ, Բ, 603): Քսան և հնգամյակս դեռ *չէր բոլորել* (Մ, 52):

պատել, շրջապատել, 4. (չբ.) ժամանակի որոշ շրջան, միավոր դառնալ, ավարտվել, լրանալ, 5. շրջան կազմել 6. բոլորվել իմաստները<sup>79</sup>:

*Ջիջել* բայի հինհայերենյան նշանակություններն են՝ (չբ.) ներքև իջնել, ցածրանալ, 2. (փիսբ.) մեղմանալ, 3. տեղի տալ, ընդառաջ գնալ, համակերպվել, հարմարվել, ներել, զիջել: Արդի հայերենում բայը կրկնասեռ է՝ (չբ.) 1. այլևս հակառակը չպնդել, տեղի տալ, 2. (նբ.) ուրիշի օգտին կամավոր հրաժարվել որևէ բանից, 3. (չբ.) իր հատկանիշներով ցածր մնալ, 4. (նբ.) պարտքը չպահանջել, (չբ.) 5. զեղչ կատարել, 6. տեղի տալ, 7. մոլության մեջ որևէ հատկանիշով ցած լինել, 8. կրճատել, 9. (նբ.) հանցանքը ներել, 10. (չբ.) համառությունից հրաժարվել, 11. (չբ.) իր դիրքից իջնել նշանակություններով<sup>80</sup>:

*Գործել* բայը, բացի գրաբարյան 1. աշխատանք կատարել, 2. մշակել, 3. ստեղծել ներգործական սեռի իմաստներից, ունի նաև չեզոք սեռի 4. գործունեություն ունենալ, 5. ընթացքի մեջ լինել նշանակությունները<sup>81</sup>, *զեղել* բայը բացի գրաբարյան 1. լիովի լցնել, 2. դիզել, կուտակել, 3. թափել, ծավելել, սփռել ներգործական սեռի նշանակություններից, արդի հայերենում ունի չեզոք սեռի 3-լիովի արտահայտվել, դրսևորվել, 4. (փիսբ.) հորդել, հոսել իմաստները<sup>82</sup>, *դարաձայնել* բայը, բացի գրաբարյան «չհամաձայնել, անհամաձայն լինել» նշանակություններից, արդի հայերենում ունի նաև «տարփողել, հոչակել, տարածել» իմաստները<sup>83</sup>, *ծափել* գրաբարյան «ծափահարել» իմաստին զուգահեռ ձեռք է բերել նաև *գովերգել* ներգործական սեռի նոր նշանակությունը և այլն<sup>84</sup>:

Արդի հայերենի կրկնասեռ բայերի քննությունը հաստատում է այս միտքը, որ հայերենում կրկնասեռությունը պայմանավորող նբ և չբ նշանակությունները կարող են լինել տարբեր բառիմաստներ (ինչպես վերոհիշյալ բայերի դեպքում) կամ սոսկ գործողության ուղղության փոփոխությունը ցույց տվող նշանակություններ: Օրինակ՝ *սարսել*-ը գրաբարում չեզոք սեռի բայ է՝ «սոսկալ, ցնցվել, ահաբեկվել» նշանակություններով, արդի հայերենում բայը կրկնասեռ է. ունի նաև

<sup>79</sup> Երկնային գահիդ շուրջն են բոլորել պերճանք, վայելում, պնդություն ու լույս (ՎՏ): Մինչև անգամ երեխաները *բոլորեցին* անդամալույծի առաջ (ԴԴ):

<sup>80</sup> Նա իր սենյակը *զիջեց* եղբորը: Վարչությունը որոշել էր տասնհիգ հազար ռուբլու պարտքը *զիջել* չքավորներին: Հայիոյանքները ես նրան *չեմ զիջի* (ԺՀԼԲԲ, 2, 37):

<sup>81</sup> Թողեք առավոտը բացվի, այնուհետև *կգործենք*, ինչ որ բարվոք համարեք (Մ): Ինչպես պիտի *գործի* կյանքի ասպարեզ մտնելուց հետո (ԺՀԼԲԲ, 1, 439):

<sup>82</sup> Հողի կյանքը *զեղում է* առողջությամբ (ԺՀԼԲԲ, 2, 28): (Սերը) հեղեղանման *զեղում էր* դեպի բոլոր արարածները, (ԺՀԼԲԲ, 2, 28):

<sup>83</sup> Եվ գյուղացին երգ հորինեց, Գովեց հովվին ու յարին, Եվ երգելով *դարաձայնեց* այս արկածը սիրային (ԺՀԼԲԲ, 4, 460):

<sup>84</sup> Սովոր են *ծափել* թե՛ փառք, թե՛ անկում (ԺՀԼԲԲ, 2, 660):

«ցնցել, ահաբեկել, վախեցնել» իմաստները, *թարթել* բայը արդի հայերենում ունի ոչ միայն գրաբարյան «կոպերը խփել-բացել» ներգործական, այլև նոր՝ «կոպերը բացվել-փակվել» չեզոք սեռի նշանակությունը, *տվայտել* բայը հին հայերենում ունի «տառապել, տանջվել, չարչարվել» չեզոք, իսկ արդի հայերենում՝ նաև «*ներդել, չարչարել*» ներգործական սեռի նշանակությունները, *շառագունել* բայը արդի հայերենում ունի ոչ միայն գրաբարյան (չբ.) «շառագույն դառնալ, շիկնել, կարմրատակել» այլ նաև (նբ.) «շառագույն դարձնել, կարմրեցնել» իմաստները, այսինքն՝ կրկնասեռ են<sup>85</sup>:

Ինչպես տեսնում ենք, իմաստային նորաբանությունը կարող է առաջ բերել քերականական նոր հատկանիշ: Դա տեղի է ունենում, երբ բառիմաստի փոփոխությունը չի մնում իմաստաբանության սահմաններում, այլ անցնում է քերականության սահմանները և հող նախապատրաստում քերականական հատկանիշների համար<sup>86</sup>:

Քերականական նոր արժեքավորում ստացած մի քանի բայեր ներկայացնենք աղյուսակով.

|         | Գրաբար                                                | Արդի հայերեն                                                                                                                                                                                                                                                                                                      |
|---------|-------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Խարսխել | (նբ.)<br>հաստատել,<br>կարգել                          | (նբ.) 1. <i>խարխսի գցելով նավը կանգնեցնել</i> . Նավաստիները ափից քիչ հեռու <i>խարսխեցին</i> նավը:<br>(չբ.) 2. <i>խարխսի գցելով կանգնել</i> . Շոգենավը <i>խարսխեց</i> Սերքեճիի մոտերը:<br>(նբ.) (փխբ.) 3. <i>բնակության համար մի վայրի հետք կապել</i> . Ի վերջո կյանքս <i>խարսխեցի</i> հրվանդաններից մեկի մոտ: 01) |
| Շվայտել | (չբ.) վայելքներին անձնատուր լինել, ցոփանալ, շվայտանալ | (չբ.) 1. շվայտության անձնատուր լինել,<br>(նբ.) 2. վատնել, սպառել. Ինքն իրեն <i>շվայտելով</i> ՝ քեզից բնավ չի կշտանում:                                                                                                                                                                                            |

<sup>85</sup> *Սարսել, թարթել, տվայտել, շառագունել, կայտառել*: Օրինակ՝ Չի սարսի ոչինչ իմ ընկերներին (ԺՀԼԲԲ, Դ, 281): Երբեմն ճրագները *թարթում էին* երկու անգամ, երեք անգամ (ԱԲ): Մի տանջալից, ծանր երազ քեզ *տվայտեց* (ԺՀԼԲԲ, 4, 530): Արեգակի ոսկեշող ճառագայթները *շառագունում էին* Կարմիր քարի ճակատը (ԺՀԼԲԲ, 4, 62) և այլն:

<sup>86</sup> Ա. Արբահամյան, նշվ. աշխ., էջ 612:

|          |                                           |                                                                                                                                                                              |
|----------|-------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Թխսել    | (նբ.) 1. թուխս նստելով ձագ հանել          | (նբ.) 1. թուխս նստելով ձագ հանել, (փխբ.) 2. սերել, փխբ 3. նյութել, փխբ. 4. հորինել, 5. (նբ.) երկար նստել, վեր չկենալ. Ինչ ես այդքան <u>թխսել</u> , վե՛ր կաց: (ԺՀԼԲԲ, Բ, 208) |
| Ցայտել   | (չբ.) ցայտել, ծագել                       | (չբ.) 1. դուրս հոսել, 2. առկայծել, 3. ծագել, 4. տեղից դուրս թռչել, 5. (նբ.) ցայտեցնել. Թարմ, զովաշունչ շատրվաններ <u>ցայտում էին</u> զով շիթեր:                              |
| Փոթորկել | (չբ.) սաստիկ դառնալ, սաստկանալ, բորբոքվել | չբ-1. փոթորկվել, 2. (նբ.) ալեկոծել, հուզել. Ինչո՞ւ ես խաղաղ հոգիս <u>փոթորկում</u> :                                                                                         |

Կրկնասեռության ձևավորումը կարող է պայմանավորվել ոչ միայն իմաստային նորաբանությամբ, այլ նաև բայերի իմաստային շրջանակների փոփոխությամբ կամ բառիմաստի շրջմամբ, օրինակ՝ *խտրել*-ը գրաբարում ներգործական սեռի բայ է՝ իմաստային հետևյալ դիտվածքով՝ 1. *տարբերություն դնելով՝ ընտրել, զանազանել, 2. ծիսական նկատառումներով զգուշանալ մի բանից, 3. գուշակություն անել, չարագուշակ համարել* նշանակություններով: Արդի հայերենում բայը կրկնասեռ է՝ (նբ. // չբ.) 1. *խտրություն դնել, 2. տարբերել* իմաստներով<sup>87</sup>:

*Ընկրկել* բայի հասկացության ծավալում լեզվի զարգացման ընթացքում ձևավորվել է տրամագծորեն հակառակ իմաստը և պայմանավորել բայի կրկնասեռությունը. գրաբարում բայն ունի (նբ.) 1. հետ մղել, 2. կորացնել, 3. տապալել, իսկ արդի հայերենում՝ (չբ.) 1. հարձակման ընթացքում որևէ արգելքի հանդիպելով՝ կանգնել, (փխբ.) 2. նահանջել, զիջել, (փխբ.) 3. հետ կանգնել, (փխբ.) 4. կանգ առնել, (փխբ.) պարտվել, (նբ.) (հնց.) 5. *դիմադրելով կանգնեցնել* նշանակությունները և այլն<sup>88</sup>:

<sup>87</sup> Աշխատում էի իմ հայրենիքում հաշտություն ու խաղաղություն հաստատել հայ ու թուրքի մեջ առանց *խտրելու* (ԺՀԼԲԲ, Բ, 589):

<sup>88</sup> Զինվորները ցնցվեցին հանկարծ ու *ընկրկեցին* սկզբում երեսները թշնամին ետ-ետ գնալով: ...*ընկրկեց* նա դեպի կուլիսները: Ոչ մի ուժի առաջ *չենք ընկրկելու* (ԺՀԼԲԲ, Բ, 111) և այլն<sup>88</sup>:

Արդի հայերենում խնդրո առարկա բայերի մի մասի կրկնասեռությունը պայմանավորող նք կամ չք նշանակություն(ներ)ը արդի հայերենին անցել են բարբառներից<sup>89</sup>: Դժվար է ասել՝ հատկապես երբ են այդ բառիմաստները տեղ գտել բայերի հասկացության ծավալում (հնարավոր է՝ անգամ գրաբարում կամ միջին հայերենում), բայց միայն արդի հայերենի բառարաններում հիշատակվելու պատճառով վերագրվում են այս շրջանին: Խոսքը, օրինակ, *կոխել* բայի «հանկարծակի հարձակվել մի տեղի վրա» (Մի այդպիսի գիշեր շունը հանկարծ կոխեց: Մարդահաչ էր) և «ըմբշամարտության մեջ հաղթել» (-Ախարտի՛ք, մե գուլաշ կպինք, որն որ կոխեց, Խանդութ Խանըմն նը առնի<sup>90</sup>, *մաղել* բայի «*անձրև գալ*» (Անձրև էր մաղում իմ գլխին բարակ), *շամփրել* բայի «*սուր ցավ պատճառել*» (Ոտս շամփրում է), *ականջել* բայի «*ունկնդրել, լսել*» (Սակայն հոգին ականջում է նոր կյանքի երկաթաձայն քայլերին) նշանակությունների մասին է, որոնք արդի հայերենում պայմանավորել են հիշյալ բայերի կրկնասեռությունը<sup>91</sup>:

Խնդրո առարկա բայերի հասկացության ծավալները բարբառներում և արդի հայերենում ակնհայտորեն ընդլայնվել են՝ հաճախ իմաստային միանգամայն տարբեր ճյուղավորումներով: Կրկնասեռություն ձևավորող նոր նշանակությունները, ըստ էության, գրաբարյան բայերի բնիմաստների զարգացումներ են, թեև իմաստային ընդհանրություններ տեսնելը երբեմն բավականին դժվար է:

Այսպիսով, լեզվի պատմական զարգացման ընթացքում կատարված իմաստափոխական գործընթացների հետևանքով բազմաթիվ բայեր կրում են հասկացության ծավալի տարատեսակ փոփոխություններ, որոնք դառնում են կրկնասեռության ձևավորման հիմք. բառիմաստի փոփոխությունը հանգեցնում է քերականական հատկանիշների փոփոխության<sup>92</sup>:

<sup>89</sup> Բարբառային իմաստը, ինչպես գիտենք, գրականի այն իմաստային առումն է, որ չունի ընդհանուր գրական արժեք, այսինքն՝ բառը ձևով գրական է, իսկ իմաստային այս կամ այն առումով՝ բարբառային : Դե՛ս Ս. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 110:

<sup>90</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան, Եր., 2003, չք 132:

<sup>91</sup> *Ականջել* բայը գրաբարում (չք.) է, մյուսները՝ (նք.) *ականջել, կոխել, մաղել, շամփրել* :

<sup>92</sup> Փաստերը վկայում են, որ լեզվի տարածամասնակյա կտրվածքում կրկնասեռություն կարող է ձևավորվել նաև առանց հասկացության ծավալի փոփոխության: Բայերը իմաստային միանգամայն նույն դիտվածքով գրաբարում կարող են ընկալվել իբրև միասեռ, իսկ արդի հայերենում՝ կրկնասեռ բայեր: Օրինակ՝ բոթել բայը հայերենի պատմական զարգացման ողջ ընթացքում ունի «*վաթ լուր հաղորդել, գուժել*՝ իմաստները, այն գրաբարում չեզոք սեռի, իսկ արդի հայերենում կրկնասեռ բայ է: Նույնը պետք է ասել նաև հետևյալ բայերի մասին՝ գերազանցել. 1. *որևէ բանով մեկից կամ մի բանից անցնել, գերազանց գտնվել*: 2. *ենթադրվածից, սահմանվածից, նախատեսվածից ավելին լինել, անցնել*, զորանալ-1. *հնարավորություն ունենալ մի բան*

Բայիմաստի, քերականական երանգի և խնդրառության փոփոխություններով պայմանավորված սեռային փոխանցումները նկատելի են դառնում լեզվական փաստերի զուգադրական քննության արդյունքում: Այդ փոփոխությունները՝ որպես բառապաշարի իմաստաբանական զարգացման հետևանք, բնորոշ են բոլոր կենդանի լեզուներին:

Խնդրո առարկա բայերի պարագայում հասկացության ծավալի փոփոխությունները պայմանավորում են նաև քերականական նոր հատկանիշ(ներ): Կատարված տարժամանակյա քննությունը վկայում է, որ գրաբարում քերականական մեկ սեռ ունեցող շուրջ 40 բայեր արդի հայերենում դառնում են կրկնասեռ:

**Г. С. Забян -Глаголы двойственного залога в современном армянском языке (Залоговая двойственность в результате смещения залога).** В течение исторического развития в процессе семантических изменений около сорока глаголов древнеармянского языка, имеющих грамматически один род, в современноармянском языке, в сфере объема понятия, перенесли изменения разного характера, которые в свою очередь стали основой формирования двойственного залога; семантика слова привела к изменениям грамматических характеристик.

**H. S. Zakyan - Reciprocal verbs in modern Armenian (verbs, which obtained reciprocity as a result of voice combination).** During the historic development of semantic modification processes, about forty verbs of the same grammatical gender in old Armenian have undergone changes of various character in modern language in the sphere of notions volume. In their turn, they became the basis for the formation of reciprocal voice; the semantics of the word led to the changes in grammatical characteristics.

---

*անելու, ուժը պահել, կարողանալ, ծեռնահաս լինել, հնար գտնել, 2. դիմանալ, 3. գործնալ, ուժեղանալ, հովանավորել. 1. հովանի լինել, փխբ. 2. հովանավոր՝ պաշտպան դառնալ, պաշտպանել, խելամտել. -1. հասկանալ, ըմբռնել, 2. խելամուր լինել, հետամտել-1. հեղամուր լինել, հալածել, հեղապնդել, խժաբանել-1. վայրիվերո և կոշի ու կոպիտ խոսել, ծեքաբանել. -1. ծեքելով խոսել, 2. խոսքը խեղաթյուրել և այլն:*

Բայերի իմաստային կառուցվածքները գրաբարում և արդի հայերենում նույնն են, բայց սեռային և խնդրառական հատկանիշները՝ միանգամայն տարբեր: Խնդրառությամբ պայմանավորված կրկնասեռությունը լեզվամտածողության փոփոխության հետևանք է. այն առումները, որոնք բային վերագրում է խոսողը, լեզվի զարգացման շրջաններից մեկում կարող են ընկալվել որպես կրկնասեռություն պայմանավորող նշանակություններ, իսկ մյուսում՝ ոչ: